ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 10.04.2026թ. հ.104-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

Ավան վարչական շրջանի Դուրյան թաղամասի հ.47 շենքի 2-րդ մուտքի վերելակը փոխարինվել է 2023 թվականին, իսկ 1-ին մուտքի վերելակի փոխարինման աշխատանքները ներառված են բազմաբնակարան շենքերի հին վերելակների նորով փոխարինման 2026 թվականի ծրագրում:

Դուրյան թաղամասի հ.49 շենքի 2-րդ մուտքի վերելակը փոխարինվել է 2025 թվականին, իսկ 1-ին մուտքի վերելակի փոխարինման աշխատանքները ներառված են բազմաբնակարան շենքերի հին վերելակների նորով փոխարինման 2026 թվականի ծրագրում:

Դուրյան թաղամասի հ.56 և հ.57 շենքերի բոլոր մուտքերի վերելակների փոխարինման աշխատանքները ներառված են բազմաբնակարան շենքերի հին վերելակների նորով փոխարինման 2026 թվականի ծրագրում:

Դուրյան թաղամասի հ.30 և հ.32 շենքերի վերելակների փոխարինման հարցը հնարավոր կլինի քննարկել լրացուցիչ ծրագրերի առկայության դեպքում:

Դուրյան թաղամասի հ.32, հ.35, հ.37, հ.57 հասցեներում տեղադրված աղբամաններից պատշաճ կերպով իրականացվում են աղբահանության աշխատանքներ՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից և մինչ օրս բնակիչների կողմից որևէ բողոք չի արձանագրվել:

Ինչ վերաբերում է Դուրյան թաղամասի հ.36 շենքի կոյուղու խնդրին, տեղեկացվում է, որ 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի (բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի) պատասխանատվության ներքո:

Երևանի քաղաքապետարանի 2026թ. աշխատանքային ծրագրերով Դուրյան թաղամասի հ.36 շենքի կոյուղատար համակարգի կառուցման/վերակառուցման աշխատանքներ նախատեսված չեն:

Ավան վարչական շրջանի Դուրյան թաղամասի հ.37 շենքի հարակից տարածքում «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել է շրջայց և կենտրոնի կլինիկա է տեղափոխվել մեկ թափառող շուն: Աշխատանքները կշարունակվեն:

Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ. 177 հիմնական դպրոցից մինչև Դուրյան թաղամաս բարձրացող աստիճանները 2023 թվականին ամբողջովին վերանորոգվել է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ